ՄԱՐԳՈ ՄԽԻԹԱՐՅԱՆ. Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագիրը. *Երևան, «Քննասեր» հրատ., 2002, 112 էջ:*

Հայ ժողովրդի և մամուլի պատմության XIX դ. ուսումնասիրողները և ընթերցող հասարակայնությունը լավ նվեր ստացան: Հրատարակվել է մամուլի պատմության հմուտ գիտակ, պատմաբան-բանասեր Մարգո Մխիթարյանի (1920–2001) աշխատությունը՝ նվիրված Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագրի պատմությանը: Լուսաբանվեց հայ մամուլի պատմության ևս մի սղիտակ բիծ: Մասնագետների, առավել ևս սակավաթիվ ընթերցողների է հայտնի Ստեփանեի անունը և նրա թողած ավանդը հայ մամուլի պատմության մեջ: Մ. Մխիթարյանի փոքրածավալ գիրքն ընթերցողին փոխադրում է պատմական մի ժամանակաշրջան, երբ ժողովրդի և ազգի նվիրյալները սակավ էին (ինչպես բոլոր ժամանակներում), իսկ խոսքն դաշտն սպասում էր իր հերկողներին:

Հեղինակն օգտագործել է մեծաքանակ գիտական գրականություն, բազմաթիվ արխիվային վավերագրեր (Մասենադարանի արխիվի Կաթողիկոսական դիվանի տարբեր թղթապանակների զանազան փաստաթղթեր, Գրականության և արվեստի թանգարանի Ստեփանեի ֆոնդն ամբողջությամբ, Վ.բացական պետական պատմական արխիվի փաստաթղթեր), ժամանակի հարուստ մամուլը և ստեղծել է մի աշխատություն, որն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: Իրեն հատուկ գիտական բարեխղճությամբ, բծախնդրությամբ և պատասխանատվության մեծ զգացումով Մ. Մխիթարյանը քննարկում է իր առաջ դրված խնդիրը: Փոքրածավալ այս գիրքը բաղացած է ներածությունից, չորս գլուխներից և անձնանունների ցանկից:

Առաջին գլուխը նվիրված է Ստեփանեի կյանքի և լրագրային գործունեության լուսաբանմանը: Մխիթարյանին բնորոշ է հարցը քննարկել ժամանակի դեպքերի և դեմքերի լայն հենքի վրա: Տրված է Ստեփանեի միջավայրը և՛ Մոսկվայում ուսանելու տարիներին, և՛ Թիֆլիսում, աշխատանքային գործունեության սկզբին, ապա Շուշիում, Էջմիածնում և այլ վայրերում:

Արևմտահայ արմատներով (պապը Կոստանդնուպոլսից էր), 1840 թ. Թիֆլիսում ծնված Ստեփանեն նախնական կրթությունը Ներսիսյան դպրոցում ստանալուց հետո տեղափոխվում է Մոսկվա, որտեղ 1858 թ. ավարտում է Լազարյան ճեմարանի դասարանական բաժինը: Դրան հաջորդում է Մոսկվայի համալսարանի պատմալեզվական ֆակուլտետը:

Մխիթարյանը սպառիչ բնութագիր է տվել Մոսկվայում սովորող հայ ուսանող երիտասարդության կազմակերպած ժողովներին, որտեղ նրանք վիճաբանում էին ազգային ոլորտներին վերաբերող տարբեր հարցերի շուրջ: Այդ ժամանակ էլ հենց դրսևորվում են երիտասարդ Ստեփանեի դրական հակումները. այդ ժողովների ընթացքում նա կարդում է իր բանաստեղծությունները՝ Իշխան Բագրատունի ստորագրությամբ: Նրա շրջապատը և անձամբ ինքը կապված էին «Հյուսիսափայլի», առանձնապես դրա խմբագրի հետ, գտնվում էին նրա գաղափարական ազդեցության տակ: Ստեփանեն 60-ականների սերնդից էր՝ ազգին ծառայելու իր գաղափարներով և գործունեության ծրագրերով:

Մտահղացումներն իրականացնելու ջերմ ցանկությամբ, 1862-ին նա վերադառնում է Թիֆլիս, մշակութային այդ կենտրոնում, կրթության իր առաջին օրրանում Ներսիսյան դպրոցում աշխատելու ջերմ փափագով: Սակայն դա նրան չի հաջողվում: Սկսվում է Ստեփանեի մանկավարժական գործունեությունը տարբեր դպրոցներում. Թիֆլիսի արական գիմնազիա, Սբ. Նունեի օրիորդաց ինստիտուտ, ռազմական դպրոց:

Ուսուցչական ասպարեզում դրսևորած առաջադիմական գաղափարների համար նա հեռացվում է սլետական ծառայությունից: Ժողովրդի լուսավորության գործին ծառայելու անհագուրդ ձգտումը նրան ստիպում է սեփական ուժերով իրականացնել իր ծրագիրը: Իր տանը նա հիմնում է գիշերօթիկ դպրոց, ապա Մարիամյան օրիորդաց դպրոցը (1868 թ.), մեկ տարի անց դրա մասնաճյուղը, Հավլաբարի առաջին երկսեռ վարժարանը: Նշված դպրոցներում նա կատարում էր տեսչի պարտականությունները: Սակայն սոսկ մանկավարժությունը չէր բավարարում Ստեփանեին: Ըստ նրա, իր գործունեության լայն ծրագիրը կարող էր իրականանալ միայն ամսագրի հրատարակությամբ: Քանի որ շատ դժվար էր հրատարակության թույլտվություն ստանալը, Ստեփանեն համաձայնության եկավ Մարկոս Աղաբեկյանի արդեն դադարած «Կռունկ հայոց աշխարհի» ամսագրի հրատարակիչ Համբարձում Էնֆիաճյանի հետ՝ պարբերականը նոր ծրագրով հրատարակելու համար: 1865 թ. լույս է տեսնում նոր՝ «Հայկական աշխարհի կռունկը»: Ստեփանեն իր հիմնական նպատակը համարում էր գիտության լույսը ժողովրդի մեջ տարածելը, այն համարելով «ազգովին նորոգվելու միակ միջոցը»: Ելնելով այդ դրույթից՝ նա ցանկանում էր ամսագիրը հրատարակել 5 բաժնով. դրականություն, մանկավարժություն, քննադատություն և մատենագիտություն, հասարակական կյանք, մանրալուրեր: Բաժինների խորագրերի անվանումն արդեն բացահայտում է խմբագրի գործունեության լայն ընդգրկումը: Ամսագրի և խմբագրի համար կարևոր էր, որ հաջողվում է ստանալ թույլտվություն և հրատարակել ամսագիրը «Հայկական աշխարհ» անվանումով: Տարբեր պատճառներով փոխվում է ամսագրի հրատարակության վայրը. Թիֆլիս, Շուշի, Գանձակ, Էջմիածին, Բաքու:

Մխիթարյանը հանգամանալից քննության է ենթարկում այն պատճառները, որոնք ստիպում են հայրենանվեր մտավորականին գործել ծանր պայմաններում: Զարմացնում է խմբագրի ծանր և համբերատար աշխատանքը Շուշիում, որտեղից նա Թիֆլիսի գրաքննական կոմիտեին էր ուղարկում պատրաստի ամսագիրը, սպասում հրատարակության թույլտվություն ստանալուն, ապա ետ ուղարկածը տպում կամ Շուշիում, կամ Գանձակում:

1871 թ. Ստեփանեն ընդունում է հոգևոր կոչում, ձեռնադրվում սկզբում սարկավագ, ապա՝ վարդապետ: Նրա համոզմունքով ազգի փրկությունը կապված էր երկու կարևոր գործոնների՝ դպրոցի և եկեղեցու հետ: Եվ իր կարճատև կյանքի ընթացքում նա հավատով փարվեց այդ գաղափարին և անվարան ծառայեց այդ երկու հաստատություններին: Նրա սկզբունքային և ուղղամիտ պահվածքը, անկաշառ և քննադատական վերաբերմունքը հասարակական, մշակութային և նույնիսկ հոգևոր գործիչների նկատմամբ, իր դեմ հարուցեցին տարբեր անձնավորությունների անվստահությունը: Մխիթարյանը փաստերով ցույց է տալիս, թե ինչպես, գործունեության դեռ առաջին տարիներից, նրա շուրջն ստեղծվել է լարված մթնոլորտ և փոխարքայությունն ի դեմս Ստեփանեի, տեսնում է առաջադիմական գաղափարների տեր մի վտանգավոր գործչի:

1880-ին Ստեփանեն գործուղվում է արտասահման՝ Գերմանիա, Ավստրիա, Ֆրանսիա՝ Գևորգյան ճեմարանում մանկավարժություն դասավանդելու պատրաստվածություն ստանալու նպատակով: 14 ամիս Եվրոպայում մանկավարժություն ուսումնասիրելուց հետո, երբ վերադառնում է Էջմիածին, հակառակ տրամաբանության, նրան ուղարկում, ավելի շուտ «աքսորում» են Նոր-Նախիջևանի մոտ գտնվող Սուրբ Խաչ վանքը: Աստրախան, Վլադիկավկազ, Ախալքալաք ու Ախալցխա, ապա Մոսկվա ու Պետերբուրգ, բոլոր վայրերում նվիրյալ մանկավարժ և կազմակերպիչ, սակայն Ներքին գործերի նախարարության անվստահությանն արժանացած մի գործիչ, որին հատուկ հրահանգով կանչում են Էջմիածին և դարձյալ մեկուսացնում Սուրբ Խաչում: Հայ մտավորականներն ուղիներ են որոնում նրան վերստին մանկավարժական գործունեության վերադարձնելու համար: Գործնական քայլեր են կատարում նույնիսկ արևմտահայ մտավորականները: Վեր-

ջապես 1893-ին նորընտիր կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանն Էջմիածին ուղևորվելու ճանապարհին Օդեսայում հանդիպում է Ստեփանեին և նրան իր հետ տանում Մայր Աթոռ, որտեղ 1894-ին ձեռնադրում է եպիսկոպոս, իսկ 1895 թ. նշանակում Ասարախանի թեմի առաջնորդական փոխանորդ:

Դեռ նոր էր սկսել իր բեղմնավոր մանկավարժական գործունեությունը, երբ դարձյալ միջամտում է Ներքին գործերի նախարարությունը, արգելելով վեհափառ հայրապետին Ստեփանեին հաստատել թեմի հոգևոր առաջնորդ: Նա դարձյալ մեկուսանում է Սուրբ Խաչ վանքում: Կաթողիկոսը հույս ուներ նրան ուղարկել Անգլիա կամ ԱՄՆ, որպես հոգևոր առաջնորդ, ինչը փափագում էին այդ գաղթօջախների հայ համայնքները: Դարավերջին, երբ ցարական կառավարությունը փակել էր հայկական դպրոցները, նրան թույլատրում են վերադառնալ Էջմիածին: Բայց ճանապարհին, Թիֆլիսում, 1900 թ. նոյեմբերի 14-ին, իր մահկանացուն է կնքում Ստեփանեն և թաղվում այդտեղ: Իր ողջ խնայողությունները նա կտակել էր ազգի լուսավորության սուրբ գործին, ինչին անմնացորդ նվիրեց իր կյանքը:

Աշխատության երկրորդ գլուխը ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի իրադարձությունների հենքի վրա քննարկում է «Հայկական աշխարհ» ամսագրի կատարած գերը, բացահայտում նրա կապը «Հյուսիսափայլի» նաղարյանական թևի հետ, նալբանդյանական հայացքները չընդունելը, որոշակի շրջադարձը դեպի ազգային-պահպանողականները, մանավանդ դեպի Գաբրիել Այվազովսկին: Բացահայտված և վերլուծված է Ստեփանեի վարած երկդիմի քաղաքականությունը, որի պատճառով նրան հարվածում էին երկու կողմից. ցարական կառավարությունը նրա մեջ նկատում էր ըմբոստության նկարագիր ունեցող մարդու, իսկ բարձր հոգևորականությունը նրա գործունեության մեջ տեսնում էր նալբանդյանական ոգի: Մխիթարյանն ընդգծում է «Հայկական աշխարհին» Գրիգոր Արծրունու դործակցության դրական ազդեցությունը: Վերջինս Եվրոպայում ուսանելու տարիներին ամսագրին ուղարկած 35 հոդվածներում և թղթակցություններում քննարկում է հայ իրականության համար կենսական նշանակություն ունեցող հարցեր: Իրավացի է Մխիթարյանը, երբ մինչև «Մշակի» հրատարակությունը «Հայկական աշխարհը» համարում է նշանակալից երևույթ և «կովկասահայ իրականության հավաստի սկզբնաղբյուր»:

Երրորդ գլուխը ներկայացնում է «Հայկական աշխարհն» իբրև մանկավարժական օրգան: Եվ քանի որ մանկավարժական հոդվածների մեծ մասը դրել է խմբագիրը, հեղինակը փաստորեն քննարկում է նրա մանկավարժական հայացքներն ու գործունեությունը: Դրանց մեջ ընդգծվում է երևույթների պատճառները մեկնաբանելու կարողությունը, հին դպրոցների հակամանկավարժական մեթոդներին հակադրվելը: Ստեփանեն հենվում է առաջադեմ մանկավարժների՝ Լայբնիցի, Ռուսոյի, Բելինսկու, Դոբրոլյուբովի, Պիսարևի մանկավարժական հայացքների վրա և դրանցով նա միաժամանակ ներկայացնում է առաջադեմ մանկավարժական միտքը:

Չորրորդ գլուխը նվիրված է «Հայկական աշխարհում» լույս տեսած դեղարվեստական դրականության քննարկմանը: Ընդգծելով ազգային դրականություն ստեղծելու անհրաժեշտությունը, Ստեփանեն դրա ակնառու օրինակներից է համարում «Վերք Հայաստանին» և «Սոս ու Վարդիթերը» և գտնում, որ դրանց մեջ զգացվում է «ազգային և մարդկային շնչառությունը»: Խմբագիրը քննարկում է նաև ժամանակի դրական լեզվի առանձնահատկությունները և բացահայտում նրա կապը հասարակական կյանքի հետ: Ժողովրդի գրական ճաշակը բարձրացնելու նկատառումով խմբագիրն իր ընթերցողներին ծանոթացնում է համաշխարհային դրականության արժեքների հետ, ապա լույս ընծայում ժամանակի գրողների տարբեր ստեղծագործություններ: Մխիթարյանը քննարկում է դրանք, գնահատում և բացահայտում խմբագրի՝ այդ ստեղծագործությունները հրատարակելու նպատակները, բացատրում «խմբագրի սկզբունքայնությամբ, ժողովրդի լուսավորության և երջանկության գործին անվերապահորեն ծառա-

յելու հաստատակամությամբ»: Հեղինակը բարձր է գնահատում Ստեփանեի անգնահատելի դործը՝ Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության աշխարհաբար թարգմանությունը կատարելը և հրատարակության դժվարին դործն իրականացնելը: Մխիթարյանն արժեվորում է «Հայկական աշխարհ» ամսագրի և գրա անդադրում խմբագիր Խորեն Ստեփանեի կատարած շնորհակալ աշխատանքը, այն համարում հայ մամուլի պատմության ընդհանուր շղթայի օղակներից մեկը, որն ապահովել է նրա զարգացման ընթացքը:

Աշխատությունը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ: Ընթերցողներն ըստ արժանվույն կգնահատեն այս գիրքը, որն արժեվորելու և ներկայացնելու փորձ է այս գրախոսությունը: Շնորհակալությամբ ընդգծում ենք գիտնականի որդու՝ Վարուժան Պողոսյանի մորը վայել մանրակրկիտ, բծախնդիր և պատասխանատվության բարձր զգացումով կատարած աշխատանքը՝ գիրքը խմբագրելու և հրատարակության պատրաստելու ուղղությամբ:

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ